ՄԱՆՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԶՈՒԼԱԼՅԱՆ

2012 թ. հունվարի 19-ին վախճանվեց ականավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մանվել Կարապետի Զուլալյանը, անակնկալ և անժամանակ՝ մշտապես թափուր թողնելով միայն իրեն վերապահված տեղը հարազատների, գործընկերների և հայագիտության մեջ:

Մ. Զուլալյանը ծնվել է Սիրիայի Հալեպ քաղաքում, նախնական կրթությունը ստացել տեղի ֆրանսիական դպրոցում: 1947 թ. հայրենադարձության ալիքը նրան բերեց Հայաստան, Գյումրի, որտեղ ավարտեց Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության, ապա Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռոմանագերմանական ֆակուլտետները: Այնուհետև ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա, այստեղից՝ գործուղում Լենինգրադի համալսարանի արևելագիտության ֆակուլտետ, որ սկիզբ էր դնելու գիտականի ձևավորման գործընթացին՝ ակադեմիկոս Հ. Օրբելու ղեկավարությամբ: Լենինգրադում նա պաշտպանում է իր թեկնածուական ատենախոսությունը (1960), որի շարունակությունը եղավ դոկտորականը՝ արդեն Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում (1974): Այստեղ բազմակողմանիորեն դրսևորվեցին հետազոտողի՝ նրա տաղանդն ու բացառիկ ընդունակությունները հայոց պատմության, Օսմանյան Թուրքիայի տնտեսության ու քաղաքականության հետ առաջինի առնչությունների, միջազգային հարաբերություններում նշված պետության գրաված տեղի ու նշանակության գիտական լուսաբանման գործում: 1998-ից մինչև մահկանացուն կնքելը իր բազմաշերտ գիտական հետաքրքրքրությունները նա իրացրել է մանկավարժական աշխատանքի զուգորդմամբ՝ զբաղեցնելով Երևանի մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի, ապա պրոֆեսորի պաշտոնները: Մ. Զուլալյանի գիտական մեծ վաստակի ճանաչումն էին նրա՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի (1990), ապա ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի կոչումները:

Մեզանում Մ. Զուլալյանը օսմաներենի սակավաթիվ և լավագույն գիտակներից մեկն էր, որ լիուլի դրսևորվել է իր հետազոտությունների աղբյուրագիտական բացառիկ հարուստ և բազմաժալ հենքի վրա, և որն ընդգրկում է հայրենական, լատինական, ռուսական, ֆրանսիական և անգլիական աղբյուրները: Աղբյուրագիտական լուրջ նշանակությամբ են առանձնանում Արևմտյան Հայաստանում գործող օսմանյան օրենքների, Օսմանյան Թուրքիայում հայ առևտրականության ու արհեստավորության գործունեության հիմնահարցերի վերաբերյալ նրա խորը և ամբողջական ուսումնասիրությունները: «Օսմանյան

օրենքները Արևմտյան Հայաստանում (17-18-րդ դդ.)» (Ա. Խ. Սաֆրաստյանի հեղինակակցությամբ, Ե., 1964), «Զալալիների շարժումը և հայ ժողովրդի դրությունը Օսմանյան կայսրությունում» (Ե., 1966) աշխատությունները այդ հիմնահարցերին նվիրված լավագույն ուսումնասիրություններից են արդի հայ պատմագիտության մեջ, որոնք էականորեն լրացնում են մեր պատկերացումները հայագիտության և օսմանագիտության համապատասխան հայեցակարգերի վերաբերյալ: Սրանց անմիջականորեն առնչվում է թուրքական պաշտոնական պատմագիտության հիմնավոր քննադատությունը Մ. Զուլալյանի աշխատություններում, որտեղ նա հանդես է գալիս որպես վերջինիս ծայրահեղ միակողմանիության ու ազգայնամոլության խորաթափանց բացահայտողներից մեկը մեր պատմագիտության մեջ՝ իր «Հայաստանի հին և միջին դարերի պատմության հարցերի լուսաբանումը արդի թուրք պատմագիտության մեջ» (Ե., 1970, ռուս.) գրքում:

Մ. Զուլալյանը հանգամանորեն հետազոտել է Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքն ու իրականու-թյունը «Հայաստանը 16-րդ դ. առաջին կեսին» (Մոսկվա, 1971, ռուս.,) և «Հայաստանը 16-18-րդ դարերում» (Ե., 1975) մենագրություններում: Դրանցում և առհասարակ իր աշխատություններում Մ. Զուլալյանն ի հայտ է բերել ժամանակի և միջավայրի ընկալման, պատմական իրադարձությունների ընթացքի համակողմանի իրազեկություն: Այդ բովանդակությունն ունեն նրա աշխատասիրությամբ հրատարակված Էվլիյա Չելեբիի «Սեյահեթ նամե»-ն (Մոսկվա, 1983, ռուս.) և դարձյալ, նյութի խորը իմացությամբ՝ «Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, քաղաքական պատմություն» (Ե., 1990) ուսումնասիրությունը:

Մ. Զուլալյանը երկար տասնամյակներ դասավանդել է հանրապետության բուհերում, հատկապես Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում՝ հայոց և ընդհանուր պատմություն, Արևելքի նոր և նորագույն շրջանի պատմություն՝գիտամանկավարժական բարձր որակներով, միշտ հոգատար՝ ուսանողության և իր հասցրած երիտասարդ գիտնականների հանդեպ, խստապահանջ և միևնույն ժամանակ միշտ մնալով մարդկայնորեն զգայուն, հումորով լեցուն անհատ՝ նրանց և իր գործընկերների շրջապատում:

Կիսատ մնացին Մ. Զուլալյանի մտահղացումները՝ անագորույն ճակատագրի քմահաճույքով: Բայց այն, ինչ ստեղծեց նա հայագիտության և օսմանագիտության մեջ՝ իր թողած մնայուն արժեքներն են: Եվ ոչ պակաս մնայունը՝ իր թողած անկորնչելի հիշատակը:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ